



Հ Ա Ն Դ Ի Ս

ՕՇԵՄԱՆ ԵՒ ԲԱԳՈՒՐՈՒԹԵԱՆ

ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ

ԱԼԷԳՍԱՆԴԻ Գ. Ի

ԵՒ ԿԱՅՄՈՒՅԻՈՅ

ՄԱՐԻԱՅ ՖԵՈՒՈՐՈՎՆԱՅԻ



մտոյս 15 ին Թագաւոր Կայսեր Ալէքսանդր Գ. ի
օձման եւ թագադրութեան օրը լինելով յատկա-
պէս որոշուած էր, որ մի Նպիսկապոս պատարագէ եւ գո-
հացողական մաղթանք կատարէ. սակայն սպասեալ հե-
ռագրական ազդարարութիւնը հետեւեալ օրը, այսինքն
ամսոյս 16 ին առաւօտեան ժամը 9 1/2 ընդունուած լինելը

յայտնի եղաւ Մայր Աթոռոյս բոլոր զանգակների որոտա-
ձայն ուրախ հնչմամբ, եւ ժողովրդեան խուռն բազմու-
թիւն տղամարդոց եւ կանանց հաւաքուեցին Մայր Տաճա-
րի շուրջը, հեազհետէ ժողովուեցին Ս. Սինօզի եւ այլ դի-
ւանատանց աստիճանաւորները իւրեանց համազգեստնե-
րով, տեղական զինուորների վաշտը վաշտապետով, եւ զան-
գակահաշարութեան ուրախ տրամադրութեան անուակ սպա-
սում էին գոհացողական մաղթանքի կատարուելուն՝ որ
տեղի ունեցաւ ժամը 11 ին:

Ձանգակահաշարութիւնը շարունակուեց մինչեւ երեկոյ,
իսկ ժողովուրդը թէ՛ Վաղարշապատի, եւ թէ՛ շրջակայ գիւ-
ղօրէից ուրախ զուարթ երթեւեկումէին վանքի ընդարձակ
բազում եւ սպասումէին տունջեան լուսատուի տեղի տա-
լուց յետոյ արուեստական լուսի փառահեղ տեսարանին:
Այդ երեկոյ Ս. Աթոռոյս Միաբանական Ուխտը Թագաւոր
Վայսեր թագադրութեան եւ օժման առիթով ճրագալոյց
էր կարգադրել թէ՛ Վանքում եւ թէ՛ ձեմարանում:

Արեգակը մայր մտնելուց կէս ժամ յետոյ վանքի շինու-
թեանց սլատերի երեսին յարմարեցրած կանթեղները, տա-
նիքներին դրուած ճրագները, ընդարձակ բազում շարուած
ջահերն ու լապտերները առատ լոյս էին արտափայլում.
տեղական երաժշտական գործիքները իւրեանց սուր ձայ-
նով նուագումէին ժողովրդական եղանակները, իսկ խրու-
նուած բազմութիւնը կոհակաձեւ տատանւումէր այս եւ
այն կողմ: Սկսուեց հրաւառութիւնը եւ բազմութիւնն ա-
լիձեւ երբեմն այս եւ երբեմն այն կողմն էր մղվում
կամ դէպի հրաւառի կեդրօնը մօտենալու եւ կամ տեղի
տալու՝ արուեստական ասուպների տեղատարափին չեն-
թարկուելու համար: Մայր Տաճարի աւագ զանգակատան
արեւմտեան ձախտը զարդարուած էր մի լուսափայլ
գրուագով, որ գեղեցիկ կազմակերպած կանաչագոյն պսա-
կի մէջ ցոլացնումէր Ա. եւ Մ. տառերի փակագծերը եւ
ՍԻ. նշանակը՝ իսկ դոցա վերայ «Боже Царя Храни» բա-

ուերը սպիտակ ժապաւէնի մէջ: Այս ուրախ հանդէսը տեւեց երկու ժամ, այնուհետեւ տեղական նուագահանդէսը ժողովրդեան բազմութեան հետ ուղղուեց դէպի ձեմարան այն տեղի ճրագալոյցն եւս տեսնելու:

ձեմարանի հիւսիսային ճակատը զարգարուած էր դարձեալ մի լուսափայլ եւ աւելի շքեղ դրճուագով վերեւ յիշուած ձեւովն՝ գունաւոր լապտերները թէ՛ ձեմարանի շուրջը եւ թէ՛ բագի ծառերի վերայ յարմարեցրած աւելի եւս շքեղ տեսարան էին կազմում: Թէեւ քամին մի փոքր խանգարել էր կամենում: այստեղ տեղական նուագահանդէսի փոխանակ ժողովրդին բաւականութիւն եւ հոգեկան մխիթարութիւն էր պատճառում ձեմարանի երգեցիկ աշակերտների տաղասացութիւնը, որ սկսուեց «*Боже Царя Храни*» մաղթանքով, որ չորս անգամ կրկնուեց եւ իւրաքանչիւր ընդհատմանը հազարաւոր ձայներ միաբերան «*урр*» եւ կէցցէ աղաղակներով օգը ընդերկար թնդացնումէին: Այս մաղթանքից յետոյ երգեցողութիւնը եւ ժողովրդեան զբօսանքը բաւական ժամանակ շարունակուեց եւ բազմութիւնը թէեւ շատ ուշ, բայց դարձեալ յակամայս տեղի տուեց: Նատ երեւելի հանդէսներ տեսնողներ խոստովանումէին, որ հազիւ մի այսպիսի հանդէս տեսել էին երեւելի քաղաքներում:

Հետեւեալ օրը ամսոյս 17 ին հանդիսաւոր Ս. Պատարագից յետոյ գոհացողական մաղթանք կտտարուեց ժողովրդեան եւ աստիճանաւորների խուռն բազմութեամբ: Եկեղեցական հանդէսը վերջանալուց յետոյ ըստ կանխագոյն հրաւիրման՝ բոլոր դիւանատանց աստիճանաւորները, ժողովրդեան խուռն բազմութիւն աւելի քան 400 անձինք մեծածախ ճաշ վայելեցին Վանքի ձմեռնային եւ ամառնային սեղանատանց մէջ. իսկ տեղական վաշտի զինուորները դարձեալ Վանքի հաշուուով ճաշեցին Վաղարշապատայ հասարակաց սարտիզում:

ձաշկերութի ժամանակ ամառնային սեզանատան մէջ Գեր. Տ. Սերովբէ Արբազան Եպիսկոպոսը յայտնելով հանդիսի պատճառը եւ ազդու կերպով բացատրելով այն բոլոր բարիքը, որ Հայերս վայելել եւ վայելում ենք Ռուսաց Մեծ Տէրութիւնից, եւ այն բարիքը, որ բոլոր Հայերը, լինեն թէ-եւ օտար Տէրութեանց հպատակ, ակնկալում են Ռուսաց Տէրութեան շնորհիւ եւ բարեհաճ կամեցողութեամբ վայելել, առաջարկեց կենաց բաժակ ՆՈՅՈՒՆՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՏՈՒԹԵԱՆՅ Օգոստոսիառ ԱՂԷՔՍՍՆԻՐ III. Կայսեր եւ ՄԱՐԻԱ Ֆէօդորովնայ Կայսրուհու համար, շնորհաւորելով նոցին Կայսերական Մեծութեանց թագազրութիւնն ու օժումը, երկար կեանք եւ առողջութիւն բարեմաղթելով. բոլոր սեղանակիցները յոտնկայս շամպանիայի սկահակները ձեռքերին երկարատեւ կեցցէներով եւ ուրբաներով յայտնեցին իւրեանց ամենախոնարհ հպատակական սրտի անկեղծ զգացմունքը, եւ բաժակները դատարկուեցին սեղանից դուրս պատի տակ կարգով կանգնած երիւսասարգների հրացանների սրտամամբ:

Նորին Արբազնութիւն Սերովբէ Եպիսկոպոսը երկրորդ կենաց բաժակը առաջարկեց Նորին Կայսերական Բարձրութեան Թագաժառանգի համար. եւ յաւելայրեց բարեմաղթութիւններ Ռուսաց Կայսերութեան ապագայ բարօրութեան, Ռուսաց ազգի յաջողութեան համար. դարձեալ յոտնկայս սեղանակիցների բազմութիւնը որոտաձայն կեցցէների եւ ուրբաների դղրգմամբ եւ հրացանների որոտմամբ դատարկեց շամպանիայի սկահակները:

Նորին Արբազնութիւնը երրորդ բաժակը առաջարկեց Հայոց ազգի լրութեան կենացը, բարեմաղթելով, որ ապրին նորա նշին անկեղծ երախտագիտութեամբ եւ հաւատարմութեամբ գէպի Ռուսաց Կայսերական Տունն ու գէպի Ռուսաց ազգը, որից քրիստոնէական եղբայրութեան բարիքը վայելել է ցայսօր եւ պիտի վայելէ այսուհետեւ: Սրտաձայն կեցցէներով դատարկուեց շամպա-

նիա գինու այս կենաց բաժակն եւս: Նորին սրբազ-
նութեան խօսքերը Ռուսազգի աստիճանաւորների հա-
մար թարգմանումէր գաւառապետ Մեծ. Պ. Գէորգ
Խան - Աղեան: Այս կենաց բաժակներից յետոյ Պ. Գաւա-
ռապետը Ռուսերէն լեզուով կենաց բաժակ առաջարկեց
Էջմիածնի Միաբանական Ուխտի եւ Ս. Աթոռի հաստատու-
թեան համար. նոյն Պարօնը կենաց բաժակ առաջարկեց Տե-
ղապազ Ամենապատիւ Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկո-
պոսի համար: Ընչ ասել կուզի, որ այս կենաց բաժակներն
եւս յօանկայս եւ որոտաձայն կեցցէներով ու հրացանա-
ձգութեամբ դատարկուեցին: Այսպէս ժամը 11 ին սկսելով
հացկերոյթը գրեթէ երկուսին վերջացաւ եւ ուրախ զուարթ
բոլորն էլ դուրս եկան սեղանից եւ ժողովրդեան բազմու-
թեան հետ խառնուելով, սկսեցաւ ընդհանուր զբօսանք:
Վանքի արտաքին պարսպից դուրս հիւսիսային կողմը հրա-
պարակի մէջ հասարակաց պարտիզի առաջ լարախաղացը
զուարճացնումէր բազմութեանը:

Ամսոյս 18 ին Էջմիածնի հասարակաց պարտիզում Վաղար-
շապատի եւ շրջակայ գիւղօրէից հասարակութեան հաշուով
ճաշ էր պատրաստուած. Հայ. եւ Մահմ. հոգեւորականների
կատարած գոհացողական մաղթանքներից յետոյ խուռն
բոլորեցին պատրաստուած մեծածախ սեղանի շուրջը. ա-
ռաջին սեղանը բոլորել էին Էջմիածնի Վանական Ուխտի
Անդամները, դիւանատանց գլխաւորներն ու ձեմարանի ու-
սուցիչները. երկրորդ սեղանը բոլորել էին դիւանատանց
միւս աստիճանաւորներն ու այլ յարգոյ անձինք. երրորդ
սեղանը բոլորել էին Մահմետական հոգեւորականութիւնը
իւրեանց հաւատակից աստիճանաւորներով ու յարգոյ անձ-
նաւորութիւնք, որոնց համար պատրաստուած էր պարսկ-
փյաւ եւ ըմպելիքի տեղ՝ օշարակ. մնացեալ սեղանների շուր-
ջը խմբուած էին Տան. եւ գատաւորներ: Գաւառապետ Պ.
Գէորգ Խան - Աղեան ստրի վերայ կանգնած կարգադրումէր,
ինչ որ պէտք էր եւ իրրեւ բազմամեայ փորձուած հին ծա-

ուայոյ շատ լաւ կառավարեց հացկերէթը. ամենից ուրախային երկսեռ փոքրիկ մանուկները սեղանն էր, պատուելի փոքրիկները բոլոր հանդիսի աղն էին հանդիսանում իրանց մանկական անմեղ շարժումներով, խօսակցութեամբ եւ պահանջներով:

Ճաշի ժամանակ նուագումէր տեղական երաժշտութիւնը, եւ երկու սաժէն բարձրութեամբ փայտոսն պարում ու զուարճացնում էր սեղանակիցներին:

Տեղապահ Ամենապատիւ Տ. Մկրտիչ Արքազան Արքեպիսկոպոսը առաջին կենաց բաժակը առաջարկեց Նոցին Կայսերական մեծութեանց Ալէքսանդր Ալէքսանդրովչի եւ Մարիա Ֆէոդորովնայի համար, ամբողջ բազմութիւնն յօտրնկայս որոտաձայն ուրբաներով ընդունեց առաջարկը եւ էջմիածնի ճեմարանի վարժապետական խումբը սկսեց «*Боже Царя Храни*» մաղթանքը, որ կրկնուեց երեք անգամ, եւ իւրաքանչիւր անգամի ընդհատման ժամանակ օգր թնդումէր որոտաձայն ուրբաներով:

Նորին Ամենապատիւ Արքազնութիւնը երկ. կենաց բաժակը՝ առաջարկեց Նորին Կայսերական Բարձրութեան ժառանգի եւ Ռուսաց Կայսերական Տանու Ռուսաց ազգի ապագայ բարօրութեան համար, որ դարձեալ ընդունուեց որոտաձայն ուրբաներով: Հաշտարար Դատ. քննիչ Ռուսազգի Պ. Ատրելիովը առաջարկեց կենաց բաժակ Ամենապ. Տեղապահ Հօր, էջմիածնի Միաբանական Ուխտի, Ս. էջմիածնի եւ Հայ ազգի համար: Գաւառապետ Պ. Գ. Խան - Աղեան կենաց բաժակ առաջարկեց Մահմետական հոգեւորականների եւ բոլոր Ռուսահպատակ Մահմետականների համար. ինչ ասել կուզի, որ բոլոր կենացները յոտնկայս ընդունուեցին. վերջապէս Գաւառապետ կարգադրիչ Պ. Խան - Աղեանի կենաց բաժակով վերջացաւ ճաշկերոյթը. իսկ խնջոյքը շարունակուեց մինչեւ երեկոյ. ցերեկով ժողովրդեան զբաղեցնումէին երեք լարախաղացները, որոնք միմեանց մրցելու համար ամեն ճարպիկութիւն գործ էին դնում. այդ

յարախաղացներից մինը Մահմետական Ղարխուն կոչուած գիւղիցն էր. իսկ երկուսը Հայ էին, մինը Խաթունարխցի միւսը Օշականցի. երկու հայերն եւս հմուտ էին իրանց արհեստին, բայց Օշականցին՝ գերազանցումէր իւր երկու ընկերներինցն էլ:

Արեւամտից յետոյ հասարակաց պարտիզում ճրագալոյց կար եւ ժողովուրդը զքօսնում եւ ուրախանումէր: Այս երեք օրը (15, 16 եւ 17) անընդհատ շարունակվումէր զանգակահարութիւնը:

Թագադրութեան հանդիսի առիթով կազմած այս տօների միայն արտաքինը եւ այն եւս շատ համառօտ կերպով ի գիր արձանացնելով առաջարկումեմ ընթերցողին աւելացնելով միանգամայն թէ որքան խորարմատ տպաւորութիւն է թողնում ամեն մի բարեյիշատակ դէպք. որքան սէր, անկեղծութիւն եւ երախտագիտութիւն կարող է տածել ժողովուրդը դէպի իւր Մեծ. Վեհապետը, Որի արդար կառավարութեան շնորհիւ ունի կեանքի, գոյքի տպաւորութիւն եւ բարեկեցութիւն — ապահովեալ հպատակների հաւասարութեան օրէնքով:

Աստուած իւր ժողովրդեան իղձերը տեսնելով, թող պահպանէ Ռուսաց Պայսերական Քահր հաստատուն եւ անդրդուելի, թող երկարացնէ կեանքը Օգոստափառ Մեծ. Զոյգերի, որոնց Թագադրութեան եւ Օժման հրաշափառ արարողութիւնը այնքան ուրախութիւն եւ խնդութիւն պատճառեց ժողովրդեան: Աստուած թող իւր Օժեանների կեանքը տնփորձ եւ անխտանգ պահի ամեն երեւելի եւ աներեւոյթ պատահարներից, Ահա մեր եւ ամեն Հայերի իղձերը: